



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1124-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1423-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1423-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 32-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 29-րդ և N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 25-րդ կետերի «Իրավական հիմքը» սյունակը «166-րդ» բառից առաջ լրացնել «165-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ,» բառերով.

2) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 33-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 30-րդ և N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 26-րդ կետերի «Իրավական հիմքը» սյունակը «166-րդ» բառից առաջ լրացնել «165-րդ հոդվածի 3-րդ մաս»,» բառերով.

3) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 34-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 31-րդ և N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 27-րդ կետերի «Իրավական հիմքը» սյունակը «203-րդ» բառից առաջ լրացնել «201-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր»,» բառերով.

4) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 35-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 32-րդ և N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 28-րդ կետերի «Իրավական հիմքը» սյունակը «166-րդ» բառից առաջ լրացնել «165-րդ հոդվածի 4-րդ մաս»,» բառերով.

5) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 29-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 26-րդ, N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 22-րդ, N 5 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 31-րդ, N 10 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 39-րդ և N 11 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 21-րդ կետերի «Իրավական հիմքը» սյունակում «20-րդ հոդվածի 6-րդ մաս» բառերը փոխարինել «19-րդ հոդվածի 6-րդ մաս և 30-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ» բառերով.

6) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 30-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 27-րդ, N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 23-րդ, N 4 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 39-րդ, N 5 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 29-րդ կետերի «Իրավական հիմքը» սյունակի բովանդակությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մաս և 30-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ».

7) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 38-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 35-րդ, N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 31-րդ, N 4 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 42-րդ, N 5 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 42-րդ կետերում «Հարցը» շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Նախաձեռնողի կողմից պետական փորձաքննական եզրակացության պահանջներն ու պայմանները կատարվում են՝ չխախտելով և չշեղվելով դրանցից և նախատեսվող գործունեությունն իրականացվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն ստացած նախագծային փաստաթղթերին և ՇՄԱԳ հաշվետվությանը համապատասխան».

8) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 38-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 35-րդ, N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 31-րդ, N 4 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 42-րդ, N 5 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 42-րդ

կետերի «Իրավական հիմքը» սյունակում «21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ» բառերը փոխարինել «30-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ» բառերով.

9) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 37-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 34-րդ, N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 30-րդ, N 4 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 41-րդ, N 5 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 41-րդ կետերի «Հարցը» շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Նախատեսվող գործունեության տեսակների ընդլայնում կամ վերակառուցում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում կամ քանդում կամ նախագծային փոփոխությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված տեղեկացման, կամ պետական փորձաքննական դրական եզրակացության առկայության պայմաններում».

10) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 37-րդ, N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 34-րդ, N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 30-րդ, N 4 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 41-րդ, N 5 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 41-րդ կետերի «Իրավական հիմքը» սյունակում «21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ» բառերը փոխարինել «30-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ» բառերով.

11) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ և 43-րդ կետերով՝

«

|     |                                                                                                                                                                                                                                                                                                  |  |  |     |                                                                    |  |                                 |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|-----|--------------------------------------------------------------------|--|---------------------------------|
| 39. | Բացառվել են լուծարված հորատանցքերը վերաբացելը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով՝ նաև հորատանցքեր հորատելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերը վերաբացելը                                                                                 |  |  | 1.5 | Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 37.1-ին հոդվածի 8-րդ մաս |  | փաստաթղթային և (կամ) տեսազննում |
| 40. | Ֆիզիկական և իրավաբանական անձինք բացառել են իրենց սեփականություն հանդիսացող տարածքներում լուծարված հորատանցքերի վերաբացումը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով՝ նաև հորատանցքերի հորատումը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերի վերաբացումը |  |  | 1.1 | Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 37.1-ին հոդվածի 9-րդ մաս |  | փաստաթղթային և (կամ) տեսազննում |
| 41. | Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնք գործարկում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ, իրականացրել են այդ օբյեկտների հոսակորուստների դիտանցում                                                                                                |  |  | 0.6 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մաս |  | փաստաթղթային                    |
| 42. | Հոսակորուստների հայտնաբերումից հետո տնտեսավարողները դրանք վերացրել են 14 օրվա ընթացքում                                                                                                                                                                                                          |  |  | 0.5 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մաս |  | փաստաթղթային                    |
| 43. | Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնք գործարկում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ՝ էլեկտրոնային                                                                                                                                           |  |  | 0.5 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մաս |  | փաստաթղթային                    |

|                                                                                                                                                                           |  |  |  |  |  |  |  |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|--|--|--|--|
| եղանակով յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը, լիազոր պետական մարմին ներկայացրել են հոսակորուստների դիտանցման վերաբերյալ տեղեկատվություն |  |  |  |  |  |  |  |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|--|--|--|--|

».

12) որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 6-րդ կետի «կշիռ» սյունակում «2» թիվը փոխարինել «1» թվով, 9-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 10-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 11-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 15-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 16-րդ կետի «կշիռ» սյունակում «1.4» թիվը փոխարինել «0.8» թվով, 17-րդ կետի «կշիռ» սյունակում «1.4» թիվը փոխարինել «1.2» թվով, 18-րդ կետի «կշիռ» սյունակում «0.9» թիվը փոխարինել «0.8» թվով, 21-րդ կետի «կշիռ» սյունակում «2» թիվը փոխարինել «1.5» թվով, 22-րդ կետի «կշիռ» սյունակում «1.5» թիվը փոխարինել «1» թվով, 27-րդ կետի «կշիռ» սյունակում «2» թիվը փոխարինել «1.5» թվով.

13) որոշման 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23.1-ին և 23.2-րդ կետերով՝

«

|       |                                                                                                                               |  |  |  |     |                                                                                                                               |  |              |
|-------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 23.1. | Աղբավայրը շահագործողների կողմից իրականացվում է արդյոք աղբավայրերի մոնիթորինգ աղբավայրի մոնիթորինգի իրականացման կարգի համաձայն |  |  |  | 0.5 | «Թափոնների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս, Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2105-Ն որոշման 1-ին և 2-րդ կետեր |  | փաստաթղթային |
| 23.2. | Աղբավայրը տնօրինողների կողմից իրականացվում է աղբավայրերի մոնիթորինգ աղբավայրի մոնիթորինգի իրականացման կարգի համաձայն          |  |  |  | 0.5 | «Թափոնների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս, Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2105-Ն որոշման 1-ին և 2-րդ կետեր |  | փաստաթղթային |

».

14) որոշման 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ և 41-րդ կետերով՝

«

|     |                                                                                                                                                                                                                                                                                                  |  |  |  |     |                                                                    |  |                                 |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|--------------------------------------------------------------------|--|---------------------------------|
| 37. | Բացառվել են լուծարված հորատանցքերը վերաբացելը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով՝ նաև հորատանցքեր հորատելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերը վերաբացելը                                                                                 |  |  |  | 1.5 | Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 37.1-ին հոդվածի 8-րդ մաս |  | փաստաթղթային և (կամ) տեսազննում |
| 38. | Ֆիզիկական և իրավաբանական անձինք բացառել են իրենց սեփականություն հանդիսացող տարածքներում լուծարված հորատանցքերի վերաբացումը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով՝ նաև հորատանցքերի հորատումը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերի վերաբացումը |  |  |  | 1.1 | Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 37.1-ին հոդվածի 9-րդ մաս |  | փաստաթղթային և (կամ) տեսազննում |
| 39. | Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնք գործարկում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ, իրականացրել են այդ օբյեկտների հոսակորուստների դիտանցում                                                                                                |  |  |  | 0.6 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մաս |  | փաստաթղթային                    |
| 40. | Հոսակորուստների հայտնաբերումից հետո տնտեսավարողները դրանք վերացրել են 14 օրվա ընթացքում                                                                                                                                                                                                          |  |  |  | 0.5 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մաս |  | փաստաթղթային                    |
| 41. | Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնք                                                                                                                                                                                                                  |  |  |  | 0.5 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մաս |  | փաստաթղթային                    |

|  |                                                                                                                                                                                                                                                  |  |  |  |  |  |  |  |
|--|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|--|--|--|--|
|  | գործարկում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ՝ էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը, լիազոր պետական մարմին ներկայացրել են հոսակորուստների դիտանցման վերաբերյալ տեղեկատվություն |  |  |  |  |  |  |  |
|--|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|--|--|--|--|

».

15) որոշման 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 1-ին կետի «կշիռ» սյունակում «2.5» թիվը փոխարինել «2.0» թվով, 6-րդ կետի «կշիռ» սյունակում «2» թիվը փոխարինել «1» թվով, 9-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 10-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 11-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 12-րդ կետի «կշիռ» սյունակում «2» թիվը փոխարինել «1.6» թվով, 13-րդ կետի «կշիռ» սյունակում «2» թիվը փոխարինել «1.6» թվով, 15-րդ կետի «կշիռ» սյունակում «1.5» թիվը փոխարինել «0.8» թվով, 16-րդ կետի «կշիռ» սյունակում «1.5» թիվը փոխարինել «1.1» թվով, 17-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.8» թվով, 18-րդ կետի «կշիռ» սյունակում «2.3» թիվը փոխարինել «2.2» թվով, 19-րդ կետի «կշիռ» սյունակում «2.3» թիվը փոխարինել «2» թվով, 20-րդ կետի «կշիռ» սյունակում «2.3» թիվը փոխարինել «2» թվով, 24-րդ կետի «կշիռ» սյունակում «2.3» թիվը փոխարինել «2» թվով.

16) որոշման 1-ին կետով հաստատված N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին և 10.2-րդ կետերով՝

«

|       |                                                                                                                                                                                                                  |  |  |  |     |                                           |                                |
|-------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------|--------------------------------|
| 10.1. | Բացառվել են լուծարված հորատանցքերը վերաբացելը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով՝ նաև հորատանցքեր հորատելը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերը վերաբացելը |  |  |  | 1.5 | Ջրային օբեկտների 37.1-ին հոդվածի 8-րդ մաս | փաստաթղթային և (կամ) տեսագնում |
|-------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------|--------------------------------|



|       |                                                                                                                                                                                                                                                                                                  |  |  |  |     |                                           |                                |
|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------|--------------------------------|
| 10.2. | Ֆիզիկական և իրավաբանական անձինք բացառել են իրենց սեփականություն հանդիսացող տարածքներում լուծարված հորատանցքերի վերաբացումը, իսկ առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործման նպատակով՝ նաև հորատանցքերի հորատումը կամ առանց ջրօգտագործման թույլտվության կոնսերվացված հորատանցքերի վերաբացումը |  |  |  | 1.3 | Ջրային օրենսգրքի 37.1-ին հոդվածի 9-րդ մաս | փաստաթղթային և (կամ) տեսագնում |
|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------|--------------------------------|

».

17) որոշման 1-ին կետով հաստատված N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 32-րդ, 33-րդ և 34-րդ կետերով՝

«

|     |                                                                                                                                                                                                                                                                                                                                  |  |  |  |     |                                                                    |              |
|-----|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|--------------------------------------------------------------------|--------------|
| 32. | Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնք գործարկում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ, իրականացրել են այդ օբյեկտների հոսակորուստների դիտանցում                                                                                                                                |  |  |  | 0.6 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մաս | փաստաթղթային |
| 33. | Հոսակորուստների հայտնաբերումից հետո տնտեսավարողները դրանք վերացրել են 14 օրվա ընթացքում                                                                                                                                                                                                                                          |  |  |  | 0.5 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 1-ին մաս | փաստաթղթային |
| 34. | Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնք գործարկում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ՝ էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը, լիազոր պետական մարմին ներկայացրել են հոսակորուստների դիտանցման վերաբերյալ տեղեկատվություն |  |  |  | 0.5 | «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մաս | փաստաթղթային |

».

18) որոշման 1-ին կետով հաստատված N 3 հավելվածի «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 4-րդ կետի «կշիռ» սյունակում «1.5» թիվը փոխարինել «1» թվով, 5-րդ կետի «կշիռ» սյունակում «1.5» թիվը փոխարինել

«1» թվով, 11-րդ կետի «կշիռ» սյունակում «3» թիվը փոխարինել «2» թվով, 12-րդ կետի «կշիռ» սյունակում «2.8» թիվը փոխարինել «2» թվով, 13-րդ կետի «կշիռ» սյունակում «2» թիվը փոխարինել «1.5» թվով, 14-րդ կետի «կշիռ» սյունակում «1.5» թիվը փոխարինել «0.5» թվով, 20-րդ կետի «կշիռ» սյունակում «1.6» թիվը փոխարինել «1.5» թվով.

19) որոշման 1-ին կետով հաստատված N 4 հավելվածում՝

ա. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-ին կետով՝

«

|       |                                                                                                                                                                                                                                                                                      |  |  |  |     |                                                                                    |  |              |
|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 29.1. | Լիազոր մարմին ներկայացվել են վարչական վիճակագրական «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» (տարեկան) և «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների և արտադրական լցակույտների համալիր օգտագործման մասին» (տարեկան) հաշվետվությունները |  |  |  | 0.5 | Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 22-րդ կետ |  | փաստաթղթային |
|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

բ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 33.1-ին կետով՝

«

|       |                                                                                                                                                                                                                                                                          |  |  |  |     |                                                                                    |  |                                |
|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|------------------------------------------------------------------------------------|--|--------------------------------|
| 33.1. | Առնվազն 10 տարի պահպանվել են օգտակար հանածոյի արդյունահանման, լրահետախուզման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև խտանյութից կամ ձուլվածքից օգտակար հանածոյի որակի և քանակի և այլ հատկությունների որոշման նպատակով վերցված բոլոր փորձանմուշները |  |  |  | 0.5 | Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 28-րդ կետ |  | փաստաթղթային և (կամ) տեսագնում |
|-------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|------------------------------------------------------------------------------------|--|--------------------------------|

»,

գ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 39.1-ին կետով՝

«

|       |                                                                                        |  |  |  |     |                                                                                                             |  |              |
|-------|----------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 39.1. | Գործունեությունն իրականացվում է պետական փորձաքննական դրական եզրակացության առկայությամբ |  |  |  | 1.5 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ |  | փաստաթղթային |
|-------|----------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

դ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 60-րդ և 61-րդ կետերով՝

«

|     |                                                                                                                                                                                                              |  |  |  |     |                                                                                                                                                                                                                                                                                            |  |              |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 60. | Վարչական վիճակագրական տարեկան հաշվետվությունները՝ ձև N 2-SU (օդ), ձև N 1 (թափոն), ձև N 2-SU (ջուր), ներկայացվել են պաշտոնական վիճակագրություն արտադրողի կողմից սահմանված ձևի վիճակագրական փաստաթղթի համաձայն |  |  |  | 0.5 | «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 450-Ն հրաման, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 451-Ն հրաման, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 452-Ն հրաման |  | փաստաթղթային |
| 61. | Լեռնահատկացման սահմաններում չշահագործվող բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքների մուտքերն առնվազն մեկ մետր հաստությամբ բետոնապատվել են                                                                         |  |  |  | 0.3 | Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետ                                                                                                                                                                                                         |  | տեսազննում   |

»,

ե. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 18-րդ կետի «կշիռ» սյունակում «1.2» թիվը փոխարինել «0.8» թվով, 21-րդ կետի «կշիռ» սյունակում «1.5» թիվը փոխարինել «1» թվով, 22-րդ կետի «կշիռ» սյունակում «0.85» թիվը փոխարինել «0.6» թվով, 29-րդ կետի «կշիռ» սյունակում «0.85» թիվը փոխարինել «0.6» թվով, 30-րդ կետի «կշիռ» սյունակում «0.85» թիվը փոխարինել «0.6» թվով, 31-րդ կետի «կշիռ» սյունակում «0.85» թիվը փոխարինել «0.6» թվով, 34-րդ կետի 1-ին ենթակետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.5» թվով, 38-րդ

կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.6» թվով, 44-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.5» թվով,

զ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 56-րդ կետի «Իրավական հիմքը» սյունակը «166-րդ» բառից առաջ լրացնել «165-րդ հոդված»,» բառերով.

20) որոշման 1-ին կետով հաստատված N 5 հավելվածում՝

ա. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 42-րդ կետի «Իրավական հիմքը» սյունակում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «զ» ենթակետ» բառերը փոխարինել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս» բառերով,

բ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 46-րդ կետով՝

«

|     |                                                                                                                                                                                                              |  |  |  |     |                                                                                                                                                                                                                                                                                            |  |              |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 46. | Վարչական վիճակագրական տարեկան հաշվետվությունները՝ ձև N 2-SU (օդ), ձև N 1 (թափոն), ձև N 2-SU (ջուր), ներկայացվել են պաշտոնական վիճակագրություն արտադրողի կողմից սահմանված ձևի վիճակագրական փաստաթղթի համաձայն |  |  |  | 0.6 | «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 450-Ն հրաման, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 451-Ն հրաման, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 452-Ն հրաման |  | փաստաթղթային |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

զ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 24-րդ կետի բոլոր ենթակետերում «կշիռը» սյունակի «0.7» թիվը փոխարինել «0.5» թվով,

դ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 40-րդ կետի «Իրավական հիմքը» սյունակը «166-րդ» բառից առաջ լրացնել «165-րդ հոդված»,» բառերով.

21) որոշման 1-ին կետով հաստատված N 6 հավելվածում՝

ա. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

|     |                                                                                                        |  |  |  |   |                                                                                                             |  |                                           |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|-------------------------------------------|
| 18. | Պետական փորձաքննական դրական եզրակացությամբ նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները կատարվում են: |  |  |  | 1 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ |  | փաստաթղթային, չափագրում և (կամ) տեսագնում |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|-------------------------------------------|

»,

բ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 20-րդ և 21-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

|     |                                                                         |  |  |  |   |                                                                            |  |              |
|-----|-------------------------------------------------------------------------|--|--|--|---|----------------------------------------------------------------------------|--|--------------|
| 20. | Առկա՞ է ջրօգտագործման թույլտվություն                                    |  |  |  | 2 | Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 21-րդ հոդված                     |  | փաստաթղթային |
| 21. | Կատարվում են ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պարտավորությունները |  |  |  | 2 | Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ պարբերություն |  | փաստաթղթային |

»,

գ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

|     |                                                                                                                                                                               |  |  |  |     |                                                                                                   |  |              |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|---------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 23. | Հիմնադրույթային կամ նախագծային փաստաթղթերով նախատեսվող գործունեության իրականացումը սկսվել է պետական փորձաքննական դրական եզրակացությունն ստանալուց հետո՝ երկու տարվա ընթացքում |  |  |  | 0.5 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս |  | փաստաթղթային |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|---------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

դ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

|     |                                                                                                                                             |  |  |  |     |                                                                                                             |  |              |
|-----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 24. | Հիմնադրությամբ փաստաթուղթով ընդունվել կամ նախատեսվող գործունեությունն իրականացվում է պետական փորձաքննական դրական եզրակացության առկայությամբ |  |  |  | 1.5 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ |  | փաստաթղթային |
|-----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

ե. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25-րդ կետով՝

«

|     |                                                                                                                                                                                                              |  |  |  |     |                                                                                                                                                                                                                                                                                            |  |              |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 25. | Վարչական վիճակագրական տարեկան հաշվետվությունները՝ ձև N 2-SU (օդ), ձև N 1 (թափոն), ձև N 2-SU (ջուր), ներկայացվել են պաշտոնական վիճակագրություն արտադրողի կողմից սահմանված ձևի վիճակագրական փաստաթղթի համաձայն |  |  |  | 0.5 | «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 450-Ն հրաման, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 451-Ն հրաման, Բնապահպանության նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի N 452-Ն հրաման |  | փաստաթղթային |
|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|-----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

զ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 22-րդ կետի «կշիռ» սյունակում «1» թիվը փոխարինել «0.5» թվով.

22) որոշման 1-ին կետով հաստատված N 7 հավելվածում՝

ա. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 1-ին կետի «իրավական հիմքը» սյունակում «46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ» բառերը փոխարինել «78-րդ հոդվածի 2-րդ մաս» բառերով,

բ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23.1-ին կետով՝

«

|       |                                                                                                                                             |  |  |  |   |                                                                                                             |  |              |
|-------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 23.1. | Հիմնադրությամբ փաստաթուղթով ընդունվել կամ նախատեսվող գործունեությունն իրականացվում է պետական փորձաքննական դրական եզրակացության առկայությամբ |  |  |  | 1 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ |  | փաստաթղթային |
|-------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

զ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 24-րդ և 25-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

|     |                                                                                                                                                                        |  |  |  |   |                                                                                                             |  |                                           |
|-----|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|-------------------------------------------|
| 24. | Հիմնադրությամբ կամ նախագծային փաստաթղթերով նախատեսվող գործունեությունն իրականացվել է պետական փորձաքննական դրական եզրակացությունն ստանալուց հետո՝ երկու տարվա ընթացքում |  |  |  | 1 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս           |  | փաստաթղթային                              |
| 25. | Պետական փորձաքննական դրական եզրակացությամբ նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները կատարվում են                                                                  |  |  |  | 1 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ |  | փաստաթղթային, չափագրում և (կամ) տեսագրում |

»,

դ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 21-րդ կետի «կշիռը» վերտառությամբ սյունակի «2» թիվը փոխարինել «1.5» թվով, նույն հավելվածի 23-րդ կետի «կշիռը» վերտառությամբ սյունակի «1.5» թիվը փոխարինել «1.0» թվով.

23) որոշման 1-ին կետով հաստատված N 8 հավելվածում՝

ա. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 2-րդ կետի «իրավական հիմքը» սյունակում «46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ» բառերը փոխարինել «78-րդ հոդվածի 2-րդ մաս» բառերով,

բ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 20-րդ և 21-րդ կետերում «կշիռը» վերտառությամբ սյունակի «2» թիվը փոխարինել «1» թվով,

զ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին կետով՝

«

|       |                                                                                                                                             |  |  |  |   |                                                                                                             |  |              |
|-------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 21.1. | Հիմնադրությային փաստաթուղթն ընդունվել կամ նախատեսվող գործունեությունն իրականացվում է պետական փորձաքննական դրական եզրակացության առկայությամբ |  |  |  | 2 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ |  | փաստաթղթային |
|-------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

դ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 22-րդ և 23-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

|     |                                                                                                                                                                         |  |  |  |   |                                                                                                             |  |                                           |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|-------------------------------------------|
| 22. | Հիմնադրությային կամ նախագծային փաստաթղթերով նախատեսվող գործունեությունն իրականացվել է պետական փորձաքննական դրական եզրակացությունն ստանալուց հետո՝ երկու տարվա ընթացքում |  |  |  | 1 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս           |  | փաստաթղթային                              |
| 23. | Պետական փորձաքննական դրական եզրակացությամբ նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները կատարվում են                                                                   |  |  |  | 1 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետ |  | փաստաթղթային, չափագրում և (կամ) տեսագնում |

».

24) որոշման 1-ին կետով հաստատված N 9 հավելվածում՝

ա. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 2-րդ կետի «իրավական հիմքը» սյունակում «46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ» բառերը փոխարինել «78-րդ հոդվածի 2-րդ մաս» բառերով,

բ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերի «Կշիռը» վերտառությամբ սյունակում «3.5» թիվը փոխարինել «3» թվով,

գ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով՝



«

|      |                                                                                                                                   |  |  |  |   |                                                                                                             |  |              |
|------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|
| 8.1. | Հիմնադրությամբ փաստաթուղթով կամ նախատեսվող գործունեությունն իրականացվում է պետական փորձաքննական դրական եզրակացության առկայությամբ |  |  |  | 3 | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ |  | փաստաթղթային |
|------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|--|--|---|-------------------------------------------------------------------------------------------------------------|--|--------------|

»,

դ. «Վերահսկողական բնույթի հարցեր» վերտառությամբ աղյուսակի 14-րդ և 15-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

|     |                                                                                                                                                                              |  |  |  |     |                                                                                                             |  |                                           |
